ըլլին։ Թուէր այդէն թէ Վիզլէք պիտի յաջորդէր Քլարիին։ — Պատերազմի պաշտօնեայն ծանոյց որ այլ եւս չկայ այն առաջին հարկն՝ երբ 80 միլիոն ֆիորին խնդրեր էր, բայց չի կրնար ալ ինքն ապահովցընել՝ թէ ապագային մէջ կարեւոր պիտի չըլլայ այդ փոխառութիւնն՝ ամրութեանց համար։ Տէ Վիզլէք հրաժարական տուաւ. իսկ կայսրն Փր. Յովսէփ յանձնեց Քէօրպէրին նոր կազմել ժողովը իրեն նախագահութեամբն։ — ՌՈՒՍԻՈՅ մէջ Տփղիսին կողմերն ահաւոր երկրաշարժն տասնէն աւելի Հայ գիւղեր կործանեց, և դեռ եւս ուրիշ կողմեր կը շարունակուի շարժն, և գրեթէ 600 հոգի փլատակաց տակ թաղուեցան. Ցարն ու տէրութիւնն շատ մարդասէր կերպով փութացին նպաստելու արկածելոց, մանաւանդ՝ որ խոր և սաստիկ ձմեռն սաստկացուցած էր թշուառներուն թշուառութիւնը, Հայք եւս մեծապէս նպաստեցին արկածելոց՝ այլ և այլ տեղեր հանգանակութիւններ ընելով։ — ՎԵՆԵՏՈՒԷԼԱՅԻ մէջ ապստամբաց գլուխն Հէրնանտէզ սաստիկ կերպով հարուածուեցաւ, և տէրութեան բանակն տիրեց Մաքարայպօ քաղաքին։ — ՓԻԼԻՊՊԻՆԱՆ կղզիներուն մէջ կատարեալ խաղաղութիւն չկայ Ամերիկացւոց համար, որոց զօրավարներէն մին ալ՝ Լաւդոն, պատերազմի մէջ սպաննուեցաւ։ — Նոյն շփոթութիւնն կը տիրէ Սամօայի կղզիներուն մէջ ալ, վասն զի բնակչաց ոմանք՝ Մալիէթոայի, այլք՝ Մաթաաֆայի կողմնակիցք են։ — ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ բդեաշխն ի Փրեթորիա, Նափոլիէն ուղղակի ի Փարիզ անցաւ. ոչ մէկու հետ տեսութիւն ըրաւ։ Կ'ըսուի թէ Քրիւկէրէն թուղթ մ'ունի առ Մաք Քինլէյ նախագահն, երբեւ թէ Քրիւկէր կը յորդորէ զվերջինս միջնորդութիւն մ'ընելու ի մէջ Անգլիոյ և Պօէրներու։ — ԻՏԱԼԻՈՅ և ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ մէջ վաճառականական դաշինքն հաստատուեցաւ. Փաւլուչչի մարքէզ քարտուղարն ի Փարիզ իտալական դեսպանին՝ կոչուեցաւ ի Հռովմ։ — Մարթինի գնաց Նափոլիէն ի Մասսաուա։ — ԳԵՐՄԱՆԻԱ կը զբաղի Չինաստանի և իւր նաւային զօրութեան աճման խնդիրներով. — վերջին խնդիրն ընդունելի եղաւ. և որոշուեցաւ որ մինչեւ 1916 կամաց կամաց աճեցընեն նաւերը, տարեկան ծախքը 11 միլիոն մարք աւելցընելով. — և առանց հարկերը և մաքսերը աւելցընելու՝ փոխառութեամբ պիտի փակեն այս յաւելումը։

## ՆԱՄԱԿԱՆԻ

ՌՈՍՏՈՎ. — Մ. ԹԻՄԻՃ. — Ընդունուած են Ձեր ամէն նամակներն, և յանձնարարութիւնք կատարուած են։

ՂԱՐԱԲԱՂ. — ՀՈԳ. ՏԷՐՈՅ. — Ընդունուած են բաժնեգինն. նոյն ճամբէով կ'ընդունինք։

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ. — Տ. ԿԱՄՍ. — Ձեզ շնորհակալութիւն և յարգանք, իսկ Ձեր յիշած այն անձանց բանդագուշանաց՝ զարմանք միայն կը յայտնենք. O tempora! ô mores!

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ


ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Ակնարկ մը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչէն առաջ՝ Հայոց քրիստոնէական հաւատոց վիճակին վրայ. . . . 97
ՆՐՍԷՄ. Հ. Ս. — Հանք և իրենց ստուգաբանութիւնը . . . . . . 103
ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Աշտիշատ . . . 104
ԱԻԳԵՐԵԱՆ Հ. Բ. — Փառք ի բարձունս երգը. 109
ՋՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Գիրք մնացորդաց ըստ ճնագոյն հայ թարգմանութեանց . . 117


### ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ


LÉON DAVID. — Էտկար Շանին . . . 122
ՂԱԶԻԿԵԱՆ Հ. Ա. — Մխիթար . . . 127
ՆՐՍԷՄ. Հ. Ս. — Վ. Հ. Աւքսենտիոս Վ. Գուրգենեան . . . . . . . 129
Դեղեցկագիտութիւն. . . . . 131
Գրախօսական ակնարկ. — ՌՈՒՍԵԱՆ Հ. Վ. — Ազգագրական հանդէս . . . 132
ՆՐՍԷՄ. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից – Բիւրակն. – Մասիս. – Բիւզանդիոն. – Մշակ. – Նորդար . . . . . . 137
ՆՐՍԷՄ. Հ. Ս. — Արձագանգ . . . . 140


### ՆՈՐ ԿԵԱՆՔ


Եւրոպական մամուլ . . . . 142
Քաղաքական ամիս . . . . . 143
Նամականի . . . . . . . 144


digitised by A.R.A.R.@